ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ԵԱՍՄ-ԳՀԾՁԲ-20/2» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 26 փետրվարի 2020թ.
Ժամը 10:30

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հետևյալ անդամները՝
Հանձնաժողովի նախագահ՝
Լիլիթ Ոսկանյանը՝ ֆինանսատնտեսական բաժնի հաշվապահ
Անդամներ՝
Նավասարդ Նավասարդյան՝ Ավտոպարկի և տեխնիկական միջոցների պատասխանատու/ինժեներ
Հրաչյա Համբարձումյան՝ ՏՏ մոնիտորինգի պատասխանատու
Հանձնաժողովի քարտուղար՝
Արսեն Ավագյան՝ Գնումների համակարգման և կազմակերպման մասնագետ

1. **Տեղեկություն հայտերի բացման, գնահատման օրվա և ժամի մասին.**

1.1 «ԵԱՍՄ-ԳՀԾՁԲ-20/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերն ու հայտարարությունը հրապարակվել է 2020թ. փետրվարի 19-ին gnumner.am պաշտոնական կայքում:

2. Հայտերի վերջնաժամկետ է սահմանվել 2020թ. փետրվարի 26-ը ժամը 10:30-ն
3. **Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները /անունները/, գտնվելու վայրերի հասցեները և գնային առաջարկները.**

«ԵԱՍՄ-ԳՀԾՁԲ-20/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

| Հ/հ | Մասնակցի անվանումը | Հասցե | Ծառայության անվանումը | Ներկայացրած գնային առաջարկը առանց ԱԱՀ /հազ. ՀՀ դրամ/ | Ներկայացրած գնային առաջարկը ներառյալ ԱԱՀ /հազ. ՀՀ դրամ/ | Նախահաշվային գին Հազ. ՀՀ դրամ* |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | «Կամազ Արմենիա» ՓԲԸ | Ք. Երևան, Արտաշատի խճ. 2/4 | Հատուկ նշանակության ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ծառայություններ | 90739.737 | 108887.685 | 45000.0 |

**Պայմանագիրը կնքվելու է Պատվիրատուի կողմից նախատեսված ֆինանսական միջոցների չափով:*

4. **Տվյալներ՝ հայտը կազմելու և ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջներին համապատասխանության մասին.**

«Կամազ Արմենիա» ՓԲԸ -ի կողմից ներկայացված հայտը համապատասխանում է սահմանված կարգի պահանջներին:

5. **Տվյալներ յուրաքանչյուր բացված հայտում փաստաթղթերի առկայության և հրավերով սահմանված պայմանների համապատասխանության մասին.**

«ԵԱՍՄ-ԳՀԾՁԲ-20/2» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված կարգով մասնակցի կողմից ներկայացվել է հրավերով պահանջվող փաստաթղթերը:

6. Հանձնաժողովը որոշեց՝

Հանձնաժողովը որոշեց ընտրված մասնակից ճանաչել «Կամազ Արմենիա» ՓԲԸ-ին, որպես հրավերի պահանջներին համապատասխան և առավել ցածր գին ներկայացրած մասնակից:

Հանձնաժողովը որոշեց հաստատել գնանշման հարցման ընթացակարգով պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը և սահմանել «ԵԱՍՄ-ԳՀԾՁԲ-20/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգում անգործության ժամկետ չկիրառելը՝ համաձայն “Գնումների մասին” ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի:

Հանձնաժողովը որոշեց էլ. Փոստի /easm.himnark@gmail.com/ միջոցով ծանուցել «Կամազ Արմենիա» ՓԲԸ-ին՝ ընտրված մասնակից ճանաչելու մասին և ներկայացնել պայմանագրի նախագիծը, որը կկնքվի ընտրված մասնակցի կողմից պայմանագրի և որակավորման ապահովումները ներկայացնելու դեպքում՝ հրավերի օրինակելի ձև Հավելված 4 և Հավելված 5:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները:

Հանձնաժողովի

Նախագահ՝ Լ. Ոսկանյան

Անդամներ՝ Ն. Նավասարդյան

Հ. Համբարձումյան

Քարտուղար՝ Ա. Ավագյան